Իրավունք. բանական մարդու անպաշտպանական անշնագիր, որի մեջ գրված է մի բառ՝

ՈԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ...

ԻՐԱՎԱՀԱՇՏՈՒԱՂ



ԿՈՉ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅԵՐԻՆ

Ա. Հայ ժողովրդի պայքարը ոչ թե կրոնական է, այլ ազգային: Մեր իրավունքները ոտնահարում է ոչ թե ադրբեջանական ժողովուրդը կամ իսլամական աշխարհը, այլ Մոսկվան: Ահա թե ինչու հայությունը

ադրբեջանցիների, առավել ևս իսլամի նկատմամբ այսօր ՈՉ ՄԻ ԹՇՆԱՄԱՆՔ ՉՈՒՆԻ ԵՎ ՉԻ ԿԱՐՈՂ ՈՒՆԵՆԱԼ: Իր դրածոների միջոցով նման մըտայնություններ սերմանելու Մոսկվայի ԱՊԱՐԴՅՈՒՆ ջանքերը մեկ նպատակ ունեն. գերված ազգերին շեղել ԻՐԵՆՑ ՊԱՅՔԱՐԻ ԲՆԱԿԱՆ ՈՒՂՈՒՑ:

Բ. Մոսկվան Սումգայիթը կազմակերպելուց հետո ավելի քան չորս ամիս ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ձգձգում է 1920թ. իր կողմից արհեստականորեն ստեղծված ԱՐՑԱԽԻ արդարացի լուծումը: Նպատակը պարզ է. ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾԵԼ ԱՋԳԱՄԻՋՅԱՆ ԿՌԻՎՆԵՐԻ: Դրա պերճախոս օրինակը վերջերս Բաքվում, Մասիսում ու այլ վայրերում սկսված նոր բախումներ են:

Գ. Խորհրդային այս 68 տարիները ցույց տվեցին, որ Մոսկվան անընդհատ ընշանանք է սերմանում ազգերի, տվյալ դեպքում՝ հայերի ու ադրբեջանցիների միջև: Հետևաբար՝ քանի Խ. Հայաստանը ԱԶԱՏ ՈՒ ԱՆԿԱԽ Չէ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՅԱՆՔԸ ՄՇՏԱԿԱՆ ՎՏԱՆԳԻ տակ է, հայությունը ապահովագրված չէ հարևանների հարձակումներից: Նույն կերպ, ոչ մի երաշխիք չկա, որ Մոսկվայի համար անհրաժեշտ պահին հարձակումների զոհ չի դառնա նաև ադրբեջանական ժողովուրդը: Ուստի մեր նկատմամբ մեր բոլոր հարևանների ԹՎԱՑՅԱԼ թշնամանքի հիմնական ՊԱՏՃԱՌԸ ԽԱՀՄ կազմում գտնվելն է:

Դ. Մի քանի ամիս առաջ կրեմլը հայ-ադրբեջանական թշնամանքը բորբոքում էր ,,թաքուն,, , իբր թե գաղտնի: Այժմ երկու հանրապետությունների Գերագույն Խորհուրդների նստաշրջանները դարձնելով ԳԼԱՍՆՈՍՏի հերթական կեղծ միջոցառում, Մոսկվան հայերի և ադրբեջանցիների միջև հակամարտության քարոզչությունը դրել է ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎՐԱ: Այդ նստաշրջանների որոշումները սարքում թշնամությունը էլ ավելի խորացնելուն ուղղված ՀՐԱՀԱՆԳՆԵՐ էին: Դրանով Մոսկվան երկու ժողովուրդների պաշտոնական հայրենասերներին եզակի առիթ տվեց ծայնակայաններից, հեռուստատեսությամբ ու մամուլով լարվածությունը հասցնել առավելագույնի: Եվ եթե, պաշտոնական քարոզանին երբեմն հորդորում է ,,ողջախոհություն,, , ապա միմիայն զանգվածներին էլ ավելի գրգռելու, ազգամիջյան ընդհարումները ավելի ընդարձակելու դիտավորությամբ: Նույն դերն են կատարում նաև խորհրդային զորքերը, քանի որ հայ-ադրբեջանական ընդհարումները իբրև կանոն սկսվում են հենց այն վայրերում, որտեղ Մոսկվան զորքեր է կենտրոնացնում:

Ե. Հայերը և ադրբեջանցիները պետք է գիտակցեն, որ մեր հարևանությունը ճակատագրի բերումով ՀԱՐԱՏԵՎ է, իսկ Մոսկվայի ներկա-

յությունը այստեղ՝ ժամանակավոր: Մեր բախման հետագա ծավալումը վնասելու է միմիայն մեր երկու ժողովուրդներին /պերճախոս օրինակը Սումգայիթն է/: Հետևաբար ԲՈՅԿՈՏԵՆՔ նոր արյունահեղության ձգտող ՄՈՍԿՎԱՅԻ ՍԱԴՐԱՆՔՆԵՐԸ: Հասկանանք, որ Մոսկվան Անդրկովկասի իրավազուրկ հանրապետությունների սահմանները գծել է անարդարացի ու կամայական՝ ժողովուրդներին հակամարտության մեջ պահելու նպատակով: Թող Արցախի հարցում մեր փոխընբռնումը նշանավորի Մոսկվայի հերթական պարտությունը Այսրկովկասում:

26 հունիսի 1988թ.
Երևան

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ՄԻԱՎՈՐՍԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ